

Կարծիք

Սուրեն Սերյոժայի Աբրահամյանի «Արդի հայ պոեզիայի գեղարվեստական համակարգը» Ժ. 01.02. «Հայ նորագույն գրականության» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համարատենախոսության վերաբերյալ:

Յուրաքանչյուր ատենախոսության հետ ծանոթանալուց առաջ, նաև՝ հետո, մի շարք հարցեր են ծագում՝

1. Թեման համապատասխանո՞ւմ է դոկտորական (նաև՝ թեկնածուական) ատենախոսությանը ներկայացվող պահանջներին: Ավելի կոնկրետ՝ դիսերտունա՞կ է (диссертация) և որքանո՞վ է արդիական:
2. Ի՞նչ նպատակ ու խնդիրներ է դրել իր առջև հեղինակը և ինչպե՞ս է լուծում դրանք:
3. Ինչպիսի՞ կիրառական նշանակություն կարող է ունենալ ուսումնասիրությունը:

Արդի հայ պոեզիան բազմաշերտ, տարբեր ուղղություններով ծավալվող, թեմատիկ ու գաղափարագեղագիտական ամենատարբեր ընդգրկումների սահմաններ և փիլիսոփայական կողմնորոշումներ ունեցող բարդ իրողություն է, և այն ներկայացնել որպես գեղարվեստական համակարգ, խոստովանենք, բարդ, տարակարծությունների առիթ տվող, վիճահարույց խնդիրներ առաջադրող բնագավառ է և ուսումնասիրողից նախ՝ նյութի խոր իմացություն, ապա՝ անաչառ ու անկողմնակալ վերաբերմունք է պահանջվում այն համակարգելու, ինչպես ընդունված է ասել՝ թացը չորից տարբերելու համար:

Դասականների մասին գրելը ավելի հեշտ, կոպիտ ասած՝ գլխացավանք չպատճառող գործ է, որովհետև արդեն կա նրանց ստեղծագործություններն արժևորող, համակարգող փորձ: Բարդ ու խնդրահարույց է ժամանակակիցների մասին գրելը, որովհետև գրական պրոցեսը դեռևս գտնվում է ընթացքի մեջ: Ճիշտ է, արդեն կան ձևավորված օրինաչափություններ, բայց առաջընթացի միտումներից շատերը դեռևս գտնվում են օրինաչափություն դառնալու կամ չդառնալու ճանապարհին:

Բարդ ու խնդրահարույց է նաև այն առումով, որ քննադատը, գրականագետը պիտի հաշվի չառնի ուսումնասիրվող հեղինակների հետ իր անձնական

հարաբերությունները և լինի վերին աստիճանի անաչառ, երևույթները գնահատի՝ էլնելով գրականության ընդհանուր շահերից:

Այս առումով ցանկանում ենք արձանագրել, որ Սուրեն Աբրահամյանի՝ պաշտպանության ներկայացրած ուսումնասիրությունը համապատասխանում է դոկտորական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին և արդիական է, որովհետև արդի պոեզիան դեռևս պատշաճ կերպով չի արժևորված, չի որոշակիացված բանաստեղծների դերը, տեղը մի ամբողջ գրապատմական շրջափուլի ընդհանուր համապատկերում:

Ճիշտ է, ժամանակակից բանաստեղծությանը շատերն են անդրադարձել (Ս. Աղաբաբյան, Ս. Սարիսյան, Զ. Ավետիսյան, Ալ. Թոփչյան, Ա. Եղիազարյան... Թվարկումը կարելի է շարունակել), բայց նրանց անդրադարձները եղել են առանձին հեղինակների, նրանց առանձին ժողովածուների կապակցությամբ: Առանձին հեղինակների (Հ. Էդոյան, Ա. Հարությունյան, Վ. Հակոբյան, Հովհ. Գրիգորյան) ստեղծագործությունների մասին գրվել են թեկնածուական ատենախոսություններ, իսկ Հ. Մուսայելյանը և՛ թեկնածուական («1960-ական թթ հայ բանաստեղծության տիպաբանական խնդիրներ»), և՛ դոկտորական («Արդի հայ բանաստեղծությաքն գեղագիտական առանձնահատկությունները») ատենախոսություններ է պաշտպանել գրականության ինստիտուտում և ԵՊՀ-ում, ինչը, սակայն, չի նշանակում, թե թեման վերջնականապես սպառված է, հեղինակների տեղն ու դերը գրական զարգացումների ընդհանուր համապատկերում՝ որոշարկված, որովհետև գրական զարգացումները դեռևս ընթացքի մեջ են, և, բնականաբար, նոր խնդիրներ են առաջադրելու: Այսքանով հանդերձ Ս. Աբրահամյանի ուսումնասիրությունն առաջին փորձն է հետսնակյան պոեզիան ներկայացնելու որպես ընդհանուր համակարգ՝ տիպաբանական, ձևակառուցվածքային, լեզվաոճական քննաբանության ծիրում:

Արժանին մատուցելով նախորդ ուսումնասիրողներին, պահպանելով ակադեմիզմի բարեվարքությունը՝ Ս. Աբրահամյանը նաև բանավիճում է (հատկապես՝ Ն. Ղազարյանի, Հ. Մուսայելյանի հետ), ինչն ավելի հիմնավոր ու պատճառաբանված են դարձնում նրա ընդհանրացումները, որոնք արվում են գեղարվեստական կոնկրետ վերլուծություններով:

Ս. Աբրահամյանը աշխատանքում բացահայտում է արդի պոեզիան միասնական համակարգով ներկայացնելու իր մոդելը: Առանձին-առանձին խոսելով տարբեր հեղինակների մասին՝ նա գրում է «...ուղղությունն է միասնական, թեև տարբեր են նշված հեղինակների անհատականությունը, աշխարհին ուղղված հայացքը, կենսափորձի ընկալումը, ուստի՝ անցած ճանապարհը, առհասարակ՝ գեղարվեստական համակարգը (էջ 8):

Հետսևակյան պոեզիան (հատկապես՝ 60-80-ական թթ.) աչքի է ընկնում, այսպես ասած, «բազմամարդությամբ»: Ամբողջ հանրապետությունն ապրում էր պոեզիայով, Երևանի հրապարակներից, այգիներից շատերը դարձել էին պոեզիայի հարթակներ, տասնյակ «բանաստեղծներ» կարդում էին իրենց գործերը, հարյուրավոր ունկնդիրներ լսում էին նրանց, գրական ու ոչ գրական մամուլը ակտիվորեն արձագանքում էր միջոցառումներին, կազմակերպում բանավեճեր, քննարկումներ, ասուլիսներ...

Մի խոսքով՝ պոեզիայի իսկական բում էր:

Երիտասարդ բանաստեղծներից շատերը որակվում էին որպես նորարարներ, շատերը՝ ավանդապահներ, ինչը, կարծում ենք, ճիշտ մոտեցում չէ, եթե հաշվի առնենք, որ ժամանակի ընթացքում այդ տասնյակ բանաստեղծներից շատերը, թեպետ նաև ժողովածուներ հրատարակեցին, բայց մնացին գրականության լուսանցքներում կամ...ճանոթագրություններում:

Այդպես էլ պետք է լիներ, որովհետև նորարար համարվողներից շատերը վերցնում էին բանաստեղծության արևմտյան կաղապարները, փորձում լցնել «ազգային օրնամենտով» ու «տիրաժավորել», իսկ ավանդապահ համարվողներից շատերը «տնփեսայություն» էին անում դասականների կամ ժամանակակիցների (Հ. Շիրազ, Հ. Մահյան, Վ. Դալլոյան, Ս. Կապուտիկյան) տարածքներում և, բնականաբար, չէին կարող պոեզիայի խիտ բնակեցված տարածքում ունենալ, ինչպես Պ. Սևակն էր ասում, «սեփական տունն ու տեղը»:

Ս. Աբրահամյանն իր ուսումնասիրության մեջ անդրադառնում է այն բանաստեղծներին, որոնք գրականություն եկան լուրջ մտադրություններով ու նաև...հավակնոտ ծրագրերով (Ռ. Դավոյան, Հովհ. Գրիգորյան, Դ. Հովհաննես, Հ. Էդոյան, Ա. Մարտիրոսյան, Ա. Հարությունյան, Հր. Սարուխան, Հ. Մովսես, Վ. Հակոբյան, նաև...Ս. Չիլոյան, Ա. Ավդալյան): Պետք է ավելացվեին նաև կարծում ենք,

Արևաշատ Ավագյանը, Հր. Թամրազյանը, Էդ. Միլիտոնյանը, Հր. Բեյլերյանը: Ճիշտ է, ներածական խոսքում և առանձին գլուխներում հիշատակվում են նրանք, բայց ավելի օբյեկտիվ կլիներ նրանց նույնպես ներկայացնել համակարգի համապատկերում:

Նշված բանաստեղծների կայացման գործում մեծ դերակատարում ունեցավ «Գարուն» ամսագիրը, որը անտեսելով «վերևների» նախագգուշացումները, ամսագիրը փակելու սպառնալիքները, համարձակորեն տեղ էր հատկացնում երիտասարդ բանաստեղծներին, քննադատներին, տպագրում էր հրապարակախոսներին, ովքեր «շեղվում էին» խորհրդային գրականության ու հրապարակախոսության մայրուղուց:

Աշխատանքն ավելի կատարյալ կդառնար, եթե թեկուզ համառոտ անդրադարձ կատարվեր ամսագրին: Ուսումնասիրության հաջողված կողմերից է նաև կառուցվածքը: Չորս գլուխները, միմյանց լրացնելով, ամբողջացնում են արդի պոեզիայի համապատկերը:

Նշենք, սակայն, այս կապակցությամբ, որ ավելի նպատակահարմար կլիներ գլուխների իսկապես հաջողված խորագրերը բաժանել ոչ թե յուրաքանչյուրը հինգ, ութ, ինը, ենթագլուխների, այլ այդ ենթագլուխները խմբավորել գաղափարազեղագիտական առանցքների շուրջ, ինչն ավելի կուռ կդարձներ կառուցվածքը:

Ուսումնասիրությունը, որը բաղկացած է մոտ վեց հարյուր էջից (դոկտորական երկու ատենախոսության ծավալ), ավելի մեծ ծավալով հրատարակվել է որպես մենագրություն: Ավելի ճիշտ կլիներ այն պաշտպանության ներկայացնել ԲՈԿ-ի կողմից նշվող ծավալով, ինչի դեպքում կառուցվածքը կլիներ ավելի կուռ, գլուխները, ոչ թե այդքան ենթագլուխների բաժանած, այլ գաղափարազեղագիտական առանցքների շուրջ համախմբված:

Նշենք նաև, որ աշխատանքում կան մի շարք վրիպակներ (Օրինակ՝ բովանդակության 4-րդ գլուխ, ենթագլուխ 8-րդ), մի շարք գրականգիտական օտար անվանումներ (օրինակ՝ ինչու ստրուկտուրա և ոչ թե կառուցվածք):

Հ. Մովսեսը, անտարակույս, արդի պոեզիայի ճանաչված ներկայացուցիչներից մեկն է, բայց ինչու՞ նրա պոեզիան արժևորել «Գարուն» ամսագրում տպագրված իր իսկ «Օվսաննա, Օվսաննա» հոդվածի ոգով: Այդ հոդվածում Հ. Մովսեսի մեկնաբանությամբ«...հիստորիան (ինչպես հույներն էին ասում) և եղելությունը,-

տարեգրությունը, սպանում են պոեզիան...պոեզիան Իթաքեն է, որի ազգաբանությունը հասնում է Լեզվին: Իսկ ֆոն Հումբոլտն ասում է՝ «Լեզուն այն տաճարն է, ուր բնակվում է ազգի հոգին»: Ուստի այս ոլորտում պետք է որոնել Հակոբ Մովսեսի պոեզիայի ոգին, ժամանակը, փիլիսոփայությունը» (էջ16):

Ֆոն Հումբոլտից ավելի խորիմաստ մտքեր լեզվի մասին արտահայտել են մեր մեծ երախտավորները, և կարելի էր ոչ միայն Մովսեսի, այլ «ոգին, ժամանակը և փիլիսոփայությունը» որոնել ոչ թե Իթաքեում և Հումբոլդտի մոտ, այլ ավելի մոտ տարածքներում:

Մա անձնական դիտարկում է, որի հետ կարող է ատենախոսը չհամաձայնել:

Մեր կողմից նշված դիտարկումները նույնպես անձնական են, և, բնականաբար, ոչ բոլորն են ընդունելի հեղինակի կողմից:

Ընդհանրացնենք՝ Ս. Աբրահամյանը պաշտպանության է ներկայացրել ԲՈԿ-ի՝ դոկտորական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին լիովին բավարարող աշխատանք, որն ունի արդիական նշանակության և նախադեպ կարող է հանդիսանալ նաև նորագույն շրջանի արձակը ևս համակարգված ուսումնասիրելու, ինչու չէ, նաև նշված բանաստեղծներին առանձին մենագրություններով, ավելի հանգստանալից արժևորելու համար:

Ս. Աբրահամյանն արժանի է իր հայցած գիտական աստիճանին, ինչի համար միջնորդում ենք Ս. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի 003 խորհրդին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մարտին Գիլավյան

02.04.2021թ.



Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարտին Գիլավյանի ստորագրությունը

Հաստատում եմ՝ ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, ԲԳԹ,

դոցենտ Աշոտ Գալստյան